281.6 Գ.
Գ-47

Գևորգյան Բարդուղիմեոս

# ԿԱԹՈՒՂԻԿՈՍԱԿԱՆ
## ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ

(1908 Հոկտ. 30, 31 և Նոյեմբ. 1)

---

**ԲԱՐԴՈՒՂԻՄԷՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԸ**

*ՀԱՆԴԷՊ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆՏՐ. ՊԱՏԳԱՄԱՒՈՐԱՑ*

*ԺՈՂՈՎԻ ԵՒ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՍԻՆՈԴԻ*

*Տպարան «ՇԻՐԱԿ» Ալէքսանդրապոլ*
*1909 Թ. Յունվար* (76)

# ԿԱԹՈՒՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ

(1908 Թ. Հոկտ. 30, 31 և Նոյեմբ. 1)

---

*Բարդուղիմէոս եպիսկոպոսը հանդէպ Կաթող. ընտ. Պատգամաւորաց Ժողովի եւ Ս. Էջմիածնի Սինօդի:*

I

Ամենայն Հայոց Կաթուղիկոսի ընտրութեան Պատգամաւորաց պաշտօնական նիստերում և արարողութեանց ժամանակ (1908 Թ. Հոկտ. 30, 31 և Նոյեմբ. 1-ին) բացակայում էին առողջ միտքը և օրինական կարգերը, մանաւանդ նիստերի ղեկավարները—Տեղապահ և Պրօկուրօր՝ չէին ըմբռնել ընտրութեան առհասարակ օրէնքները։

Բայց ես այժմ պիտի ընթերցողին ներկայացնեմ միայն այն անկանոնութիւնները և ապօրինութիւնները,—նս և որոնք առընչութիւն ունին կամ յիշուած են առաջիններին հետ,—որոնց մասին առ ժամայն և առ տեղեաւն Ժողովին և Ժողովի Ղեկավարներին բանիւ և գրով դիտողութիւններ արուեցին։

Հոկտ. 30-ին, առաւօտեան 9 ժամին, Տաճարի զանգակների (երրորդը) ազդարարութեամբ շտապեցինք հոգևորական և աշխարհական պատգամաւորներս Վեհարանի դահլիճը։ Այնտեղ Սինօդի անդամ Մատթ. վարդապետը մի թերթ ձեռքին բռնած բարձրաձայն կարդաց ի լուր՝ թէ ինչ կարգով պատգամաւորներս պիտի շարուէինք և հանդիսաւոր ընթացք կազմելով գնանք Տաճարը։ Երբ նա կարդում էր անունները՝ պատգամաւորները ըստ այնմ դուրս էին ելնում և շարւում։ Թափօրի առաջից պիտի գը-